ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՏԱՇԻՐ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Տաշիր **02/11/2025**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 17 անդամներ:

Բացակա էին՝ Վահե Անախասյանը, Տաթեվիկ Գասպարյանը, Նարինե Խաչատրյանը, Վահան Ստեփանյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Սամվել Շահբազյան, Նորայր Բաղդասարյան, Աստղիկ Բարոյան, Մարգարիտա Սողոյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Էդգար Արշակյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Նունե Սոլոյանը

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՎԵՑԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԷԴԳԱՐ ԱՐՇԱԿՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի 2025 թվական տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին,
2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի գլխավոր հատակագծում փոփոխություն կատարելու և համայնքի վարչական սահմաններում գտնվող գյուղատնտեսական նպատակային նշանակության, 06-074-0374-0049 կադաստրային ծածկագրով 3.464 հեկտար արտովայրի նպատակային նշանակությունը փոխելու մասին,
3. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի գլխավոր

հատակագծում փոփոխություն կատարելու և համայնքի վարչական սահմաններում գտնվող գյուղատնտեսական նպատակային նշանակության, 06-039-0172-0074 կադաստրային ծածկագրով 13.84832 հեկտար արտովայրի նպատակային նշանակությունը փոխելու մասին,
4. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքին պատկանող հողամասերը աճուրդով օտարելու մասին
5. Փոխադրամիջոցների գույքահարկի արտոնություն սահմանելու մասին,
6. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի Մեծավան բնակավայրի վարչական տարածքում «Բոզոյան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության սեփականության իրավունքով պատկանող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտներ գործանական նշանակությամբ 15,5373 հա մակերեսով հողամասում 2 ծածկարանների կառուցման աշխատանքներին նախնական համաձայնություն տալու մասին և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2024 թվականի հուլիսի 9-ի N 72-Աորոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին,
7. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 11-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՍՏՂԻԿ ԲԱՐՈՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4. 1-րդ կետով և 82.1-րդ հոդվածով՝

Տաշիր համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի 2024 թվականի տարեկան աշխատանքային պլանը՝ համաձայն հավելվածի:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-3

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 12-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ

ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, 06-074-0374-0049 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 3.464 ՀԵԿՏԱՐ ԱՐՈՏԱՎԱՅՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ԱՆՈՒՇ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի պարբերության 1-ին կետով, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14.3 –րդ հոդվածի 5-րդ, 8-րդ, 9-րդ մասերի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշումը և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի 1064-Ա որոշումով ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի հանձնաժողովի 2025 թվականի հունվարի 14-ի N 2/փ-8 դրական եզրակացությունը

Տաշիր համայնքի ավագանին որոշում է

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի (բնակավայրի) գլխավոր հատակագծում կատարել փոփոխություն և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության հողերից 3.464 հա (կադաստրային ծածկագիր 06-074-0374-0049) արոտավայր հողատեսքը փոխադրել անտառային նպատակային նշանակության անտառներ գործառնական նշանակությամբ:
2. Համայնքի ղեկավարին՝ նշված փոփոխությունները արտացոլել Մեծավան բնակավայրի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում:
3. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի / Մեծավան բնակավայրի/ հաստատված գոտևորման նախագծում սույն որոշումից բխող փոփոխությունները

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 13-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, 06-039-0712-0074 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 13.84832 ՀԵԿՏԱՐ ԱՐՈՏԱՎԱՅՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ԱՆՈՒՇ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի պարբերության 1-ին կետով, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14.3 –րդ հոդվածի 5-րդ, 8-րդ, 9-րդ մասերի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի

Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշումը և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի 1064-Ա որոշումով ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի հանձնաժողովի 2025 թվականի հունվարի 14-ի N 2/փ- 409 դրական եզրակացությունը

Տաշիր համայնքի ավագանին որոշում է

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի (բնակավայրի) գլխավոր հատակագծում կատարել փոփոխություն և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության հողերից 13.84832 հա (կադաստրային ծածկագիր 06-039-0172-0074) արոտավայր հողատեսքը փոխադրել անտառային նպատակային նշանակության անտառներ գործառնական նշանակությամբ:
2. Համայնքի ղեկավարին՝ նշված փոփոխությունները արտացոլել Լեռնահովիտ բնակավայրի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում:
3. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի / Լեռնահովիտ բնակավայրի/ հաստատված գոտևորման նախագծում սույն որոշումից բխող փոփոխությունները

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 14-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՍԱՄՎԵԼ ՇԱՀԲԱԶՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ պարբերության 3-րդ կետով, 67-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանարպետության Լոռու մարզի Տաշիր համայնքի սեփականությանը պատկանող հողամասը օտարել աճուրդով և սահմանել մեկնարկային գները՝ համաձայն հավելվածի:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 15-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ՄԱՐԳԱՐԻՏԱ ՍՈՂՈՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 245-րդ հոդվածի 2-րդ մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի թիվ 822-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետով և 8-րդ կետերով և հիմք ընդունելով համայնքապետարան դիմած քաղաքացիների դիմումները `

Տաշիր համայնքի ավագանին որոշում է

1. Սահմանել փոխադրամիջոցների գույքահարկի արտոնություն՝
1) ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, գ. Սարչապետ, 13-րդ փողոց, 1-ին նրբանցք, տոին 4հասցեի բնակիչ Սուսաննա Անդրանիկի Ավդալյանին (ՀՎՀՀ՝ S0310245, ՀԾՀ՝ 7211620404) ազատել Տաշիր համայնքում հաշվառված ՎԱԶ 2106 (VAZ 2106) մակնիշի, պետհամարնիշի ավտոմեքենայի գույքահարկի 28245 (քսանութ հազար երկու հարյուր քառասունհինգ) դրամ գույքահարկի տույժից:
2) ՀՀ, Լոռու մարզ, Տաշիր համայնք, գ. Սարչապետ, 1-ին փողոց, թիվ 82 հասցեի բնակիչ Ռոզա Սանդրոյի Բարսեղյանին (ՀՎՀՀ՝ 18635742, ՀԾՀ՝ 6501470072) ազատել Տաշիր համայնքում հաշվառված ՎԱԶ 2101 (VAZ 2101) մակնիշի, 41SL511 պետհամարանիշի ավտոմեքենայի գույքահարկի 45279 (քառասունհինգ հազար երկու հարյուր յոթանասունինը) դրամ :
2. Փոխադրամիջոցների գույքահարկի գծով արտոնության մասով փոխադրամիջոցի գույքահարկ վճարողի փոխարեն համայնքի բյուջեից կատարել վճարում:
3 Սույն որոշմով սահմանված արտոնությունները կիրառել գույքահարկի գծով պարտավորությունների ապառքը (մայր գումարը) 2025 թվականի մարտի 1-ը ներառյալ մարելու դեպքում:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 16-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵԾԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ «ԲՈՋՈՅԱՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐ ԳՈՐԾԱՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՄԲ 15,5373 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ 2 ԾԱԾԿԱՐԱՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 9-Ի N 72-ԱՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ՍԱՄՎԵԼ ՇԱՀԲԱԶՅԱՆ)

Ղեկավարվելով «Շրջական միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, « Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հնարապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման 28-րդ կետը և 19.06.2024-ի «Բոզոյան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտներ գործանական նշանակությամբ 15,5373 հա մակերեսով հողամասում 2 ծածկարանների կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման վերաբերյալ 2025 թվականի հունվարի 30- ի հանրային քննարկման արձանագրությունը

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

1. Տալ նախնական համաձայնություն «Բոզոյան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության սեփականության իրավունքով պատկանող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտներ գործանական նշանակությամբ 15,5373 հա մակերեսով հողամասում 2 ծածկարանների կառուցման աշխատանքների իրականացմանը:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հնարապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2024 թվականի հուլիսի 9-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի Մեծավան բնակավայրի վարչական տարածքում «Բոզոյան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության սեփականության իրավունքով պատկանող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտներ գործառնական նշանակությամբ 15,5373 հա մակերեսով հողամասում 2 ծածկարանների կառուցման աշխատանքներին նախնական համաձայնություն տալու մասին» N 72-Ա որոշումը:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Ջոն Պողոսյանը չի մասնակցել քվերակությանը:

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 17-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԷԴԳԱՐ ԱՐՇԱԿՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով ՝

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու հերթական նիստի գումարման օրը և ժամը սահմանել 2025 թվականի փետրվարի 27, ժամը՝ 11:30-ին;

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 18-Ա)*

Ավագանու անդամներ

Ռ. ԱՎԴԱԼՅԱՆ

Է. ԱՐՇԱԿՅԱՆ

Կ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հ. ՄԱՐԴՈՅԱՆ

Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ

Վ. ՅՈՒՍՈՒԲՈՎ

Ջ. ՊՈՂՈՍՅԱՆ

Գ. ՋԱՎՈՒԿՋՅԱՆ

Ա. ՍՈԼՈՅԱՆ

Է. ՍՈՂՈՅԱՆ

Ա. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Ի. ՏՈՄԵՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԷԴԳԱՐ ԱՐՇԱԿՅԱՆ_____

Նիստն արձանագրեց՝ Նունե Սոլոյանը
_____